

## Գործառնական պլանի կառուցվածքը

### 1. Համառոտ նկարագրությունը

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի 2016թ. գործառնական պլանը հիմնադրամի Ռազմավարական պլանի իրականացման բաղկացուցիչն է: Լինելով առաջին գործառնական պլանը և հիմնադրամի գործունեության առաջին տարվա ծրագրային փաստաթուղթը՝ վերջինիս արդյունավետ իրականացմամբ կդրվեն Հիմնադրամի կայացման հիմքերը:

Գործառնական պլանի կարևոր վերահանումներն են.

- «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը գործելու է մրցակցային դաշտում: Ոլորտում արդեն գործում են մի շարք ինչպես շահույթ հետապնդող, այնպես էլ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում Հայաստանի բոլոր մարզերում: Վերջիններս սերտորեն համագործակցում են միջազգային կազմակերպությունների հետ:
- Հիմնադրամը գործելով մրցակցային դաշտում հնարավորություններ ունի դառնալու ոլորտի առաջատարներից հատկապես Շիրակի մարզում: Հիմնադրամի հաջողության գրավականը իր մրցակցային առավելությունների (հիմնադիրների մասնագիտական կարողությունները, կապերը միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, ձևավորված նյութատեխնիկական բազան) հզորացումն է և նոր մրցակցային առավելությունների ձևավորումը: Այս փուլում կարևորվում է այնպիսի մրցակցային առավելությունների ձևավորումը, ինչպիսիք են կուռ կազմակերպչական կառուցվածքն ու դրա արդյունավետ գործարկումը, ինչպես նաև կայուն եկամուտների ապահովումը ծառայությունների մատուցման ճանապարհով:
- 2016 թվականի աշխատանքային պլանի (հավելված 1) կատարումը պետք է մշտապես գտնվի հիմնադիրների ուշադրության կենտրոնում և պետք է ենթարկվի մշտադիտարկման՝ մոնիտորինգի (հավելված 2): Մոնիտորինգի արդյունքում ստացված գնահատականները պետք է դառնան այն հիմքը, որի վրա հիմնվելով արդեն 2016 թվականի վերջին պետք է մշակվի «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի 2017 թվականի գործառնական պլանը:

### 2. Նախադրյալներ (background)

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը պլանավորում է իր գործունեությունը ծավալել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ առավել ակտիվ գործելով Շիրակի և հարակից մարզերում: Հայաստանը այն երկրներից է, որը չունենալով էներգակիրներ (նավթ, գազ) իր աշխարհագրական

դիրքով ու բնակլիմայական պայմաններով հարուստ է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներով (հատկապես արևային էներգիա ապահովող): Հայաստանի մարզերից արևի էներգիայի օգտագործման արդյունավետությամբ հատկապես առանձնանում են Շիրակի ու Գեղարքունիքի մարզերը: Հայաստանում մշակվել է էներգախնայողության ազգային ծրագիր, շրջանառության մեջ է դրված ՎԷԱ ոլորտի համար բարենպաստ դաշտի ձևավորմանն ուղղված օրենսդրական նախաձեռնություն: Սակայն այսօր գործող օրենսդրական կարգավորիչ դաշտը, ներդրումային ու բարոյահոգեբանական միջավայրը նպաստավոր չեն ՎԷԱ և ԷԱ ոլորտի առաջանցիկ զարգացման համար: Էներգակիրների (նավթ, գազ) գների կտրուկ անկումը միջազգային շուկայում ևս էապես թուլացնում է ՎԷԱ ոլորտի զարգացման հնարավորություններն ու հեռանկարները: Ըստ միջազգային հեղինակավոր վերլուծական կենտրոնների հաղորդագրությունների առաջիկա 10 տարիներին կպահպանվի նավթի ցածր գները 30-50\$ սահմաններում: Միաժամանակ Երկիր մոլորակի առջև ծառայած գլոբալ մարտահրավերներից է (Հայաստանը այդ մարտահրավերների կիզակետում է) էկոլոգիականը որի լուծման հիմնական ուղղություններից է վերականգնվող էներգետիկայի առաջանցիկ զարգացումը:

Հաշվի առնելով նաև վեր թվարկվածը, վերջին մի քանի տարիներին ակտիվացել են այնպիսի կազմակերպությունների (հասարակական, գիտական, բիզնես) գործունեությունը, որոնք կոչված են առաջ մղել վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտը երկրում: Իսկ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն իր գործունեությունն է ծավալում 2005 թվականից:

Շուկայում բավականին ակտիվ են այնպիսի բիզնես միավորներ, ինչպիսիք են «Շտիգեն», «Արփի սոլար», «Արպրոֆեկտուս», «Էկոսիստեմ», «Ռուբինար», «Արմենիասոլար», «Բիֆի ֆիրմա», «Տեխնոկոմ» ՍՊԸ-ները, «Գևորգ Պետրոսյան», «Խորեն Մակոյան» Անհատ ձեռնարկատերերը: Այս ընկերությունների մեծամասնության դիրքերը շուկայում առավել ամուր են, քան այն նշաձողը, որին կարող է հասնել «Կանաչ տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամն այս պահին:

ՎԷԱ և ԷԱ ոլորտում իրենց ակտիվությունն են դրսևորում նաև միջազգային դոնոր կազմակերպությունները՝ իրականացնելով տասնյակ ծրագրեր: Հատկապես նկատելի են ՄՖԿ/IFC-ի Հայաստանի Կայուն էներգետիկայի ֆինանսավորման, Կովկասի կայուն էներգետիկայի ֆինանսավորման Ֆոնդի (“Energocredit”), ԵՄ «Սոցիալական և էներգաարդյունավետ Բնակարանային Ֆինանսավորման», ՄԱԶԾ-ԳԷՖ «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում», ՄԱԶԾ-ԳԷՖ «Քաղաքային «կանաչ» լուսավորություն», ՄԱԶԾ «Կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմում», ՄԱԶԾ-ԳԷՖ Փոքր դրամաշնորհների, ԱՄՆ ՄԶԳ «Մաքուր էներգիա և ջուր» Ծրագրերը: Միայն «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի (HFH) Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվում են «Արևային էներգիայի օգտագործումը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կողմից», «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում», «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում՝ ուղղված

ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին», «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագրերը:

Ընդհանուր գծերով այսպիսի միջավայրում է կոչված կայանալ ու սկսել գործել «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը: Առավել արհեստավարժ ու սպառիչ տեղեկատվություն ոլորտի շուկայի մասին հնարավոր կլինի ներկայացնել միայն շուկայի ուսումնասիրության արդյունքում:

### 3. Նպատակներ և խնդիրներ

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի 2016 թվականի Գործառնական պլանի նպատակներն են.

- «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի պետական գրանցում, կազմակերպչական կառուցվածքի հաստատում և բնականոն գործունեության ծավալում, ֆինանսական կայունության հիմքերի ապահովում,
- «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը որպես ոլորտի ճանաչված ապրանքանիշ (brand)՝ հիմքում ունենալով Հիմնադրամի տեսլականի դրույթները,
- Ռազմավարական պլանով նախանշված առաքելության ու նպատակների իրականացում՝ հիմնված արժեքային համակարգում ամրագրված սկզբունքների վրա,
- ՎԷԱ և ԷԱ ոլորտի ծառայությունների շուկայի ուսումնասիրություն և արդյունքների հիման վրա շահառուներին առաջարկվող փաթեթների մշակում,
- ՎԷԱ և ԷԱ ոլորտում ծառայությունների մատուցման համար նյութատեխնիկական բազայի ստեղծում և համալրում՝ հիմնված շուկայում առաջարկվող ծառայությունների յուրահատկությունների վրա,
- ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով կադրերի պատրաստում և վերապատրաստում (դասընթացների և վերապատրաստման թեմաների ընտրությունը նույնպես պետք է կատարվի շուկայի ուսումնասիրության արդյունքները հաշվի առնելով),
- Հետազոտական, խորհրդատվական, ուսուցողական գործունեության արդյունավետ իրականացման նպատակով գործընկեր կազմակերպությունների ցանցի ստեղծում գիտահետազոտական ու կրթական հաստատությունների հետ,
- Շուկայում ծառայությունների առաջին փաթեթների իրացում, որոնք կդառնան Հիմնադրամի այցեքարտերը:

#### 4. Գործողություններ/քայլեր

2016թ. գործառնական պլանը հիմնված է Ռազմավարական պլանով նախանշված նպատակների ու ծրագրային ուղղությունների վրա: Հիմնական ծրագրային ուղղություններն են.

- ՎԷԱ տեխնոլոգիաների առաջարկների մշակում, սարքավորումների նախագծում և արտադրություն, տեղադրում և մոնտաժ:
- ԷԱ տեխնոլոգիաների առաջարկների մշակում, շենք-շինությունների ԷԱ տեխնոլոգիաներով վերակառուցում, շինությունների ԷԱ բարձրացում:
- Գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտների նոր տեխնոլոգիաների ներմուծում, տեղայնացում, մշակում և ներդրում:
- Կանաչ տեխնոլոգիաների ոլորտում հետազոտական աշխատանքներ, կադրերի պատրաստում և վերապատրաստում, իրազեկում և խորհրդատվություն, քննարկումների, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպում:
- Համագործակցություն միջազգային դոնոր կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, Հայաստանում կանաչ տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ:

Գործողությունների (աշխատանքային) պլանը ներկայացված է աղյուսակային տարբերակով՝ Հավելված 1-ում:

#### 5. Առաջարկություններ

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի 2016 թվականի Գործառնական պլանը հիմնադրամի Ռազմավարական պլանի իրականացման մեկ տարվա ծրագիրն է: Դրա իրականացման արդյունավետությունից է կախված Ռազմավարական պլանի կայացումը:

2016թ. Գործառնական պլանի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է.

- Ռեսուրսների (մարդկային, նյութական) օգտագործումը դարձնել հնարավորինս թափանցիկ և որոշումները կայացնել մասնակից բոլոր կողմերի հետ փոխհամաձայնեցման սկզբունքով: Հիմնադրամը լինելով կորպորատիվ կառավարման սկզբունքի վրա ստեղծված կազմակերպություն, կարող է արդյունավետ գործել միայն որոշումների կայացման կոլեգիալ և փոխհամաձայնեցված մոտեցման դեպքում:

- Հնարավորիս ընդլայնել ոլորտի պրոֆեսիոնալների ներգրավումը հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններում: «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը լինելով նեղ մասնագիտացված ոլորտի մասնակից կարող է հաջողել, եթե իր գործառույթներն իրականացնելիս օգտվի բարձր որակավորում ունեցող մասնագետների ծառայություններից: Այս խնդրի լուծման բաղադրիչներից է նաև հիմնադիրների մասնագիտական կարողությունների ընդլայնումը:
- Շուկայի առաջարկները հիմնավորել մանրամասն իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքներով: Հիմնադրամը իր ծառայությունները ներկայացնելու և վաճառելու է շուկայում և առաջարկների փոքր իսկ անճշտությունները կարող են էապես վնասել շուկայում արդյունավետ գործելուն:
- Հետևողական աշխատանք սկսել Հիմնադրամի կողմից առաջարկվող ծառայությունների միջոցով կայուն եկամուտներ ապահովելու համար: Շուկայի ուսումնասիրության արդյունքների վրա ծառայությունների փաթեթների ձևավորումը պետք է ուղեկցվի գովազդային ակտիվ քաղաքականությամբ: «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելուց հետո (այն վերջնական կրնադունվի առաջիկա 1 ամսվա ընթացքում) կայուն եկամուտների ապահովման աղբյուր կարող է լինել արևային էներգիայից ստացվող էլեկտրաէներգիան:
- Հաստատել ոլորտի առաջատար միջազգային կազմակերպության հետ երկարաժամկետ համագործակցություն: «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը լինելով նեղ մասնագիտական ոլորտի կազմակերպություն, կարիք ունի ապահովել մշտապես շփումներ միջազգային փորձառություն ունեցող կազմակերպության հետ, ՎԷԱ և ԷԱ որոլտում տեղի ունեցող համաշխարհային նորարարությունները յուրացնելու նպատակով:

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ ԿՏԿ հիմնադրամ) 2016թ. գործողությունների (աշխատանքային) պլան

	Ռազմավարական պլանի թիրախը	Նպատակ 2016-ի ավարտին	Վտանգներ	Ֆինանսավորում, Մոտավոր գին	Գործողություն	Ժամանակահատված				Պատասխանատու
			Ռիսկեր			2016				
						1Q	2Q	3Q	4Q	
1	«Կանաչ տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը որպես ՀՀ-ում ՎԷԱ և ԷԱ ոլորտի առաջատար կազմակերպության կայացում	ԿՏԿ հիմնադրամի պետական գրանցում, կազմակերպչական կառուցվածքի հաստատում և բնականոն գործունեության ծավալում	Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կանոնադրության պետական գրանցման ձգձգում,  Հկմնադիրների այլ գործերով զբաղվածության պատճառով բնականոն գործունեության խափանում	Ծրագիր  <b>100000 ՀՀԴ</b>	Հիմնադիրների ժողով,  Կանոնադրության ընդունում  Պետական գրանցում  Ծրագրային ուղղությունների պատասխանատուների նշանակում					Կարապետյան Ա.  Սահակյան Խ.  Պետրոսյան Գ.  Ներգրավված իրավաբան փորձագետ
2	ՎԷԱ և ԷԱ ծառայությունների	Շիրակի մարզում շուկայի	Շուկայական հետազոտության անցկացման	Ծրագիր	Շուկայի ուսումնասիրության					Ներգրավված փորձագետներ

	մատուցում հիմնված շուկայի պահանջարկի վրա	ուսումնասիրություն և արդյունքների հիման վրա շահառուներին առաջարկվող փաթեթների մշակում	համար ֆինանսական միջոցների բացակայություն,  Անհրաժեշտ մինիմում պահանջարկի բացակայություն տեղական շուկայում,	5000 Եվրո	տեխնիկական առաջադրանքի կազմում  Իրականացնող փորձագետի (-ների) ընտրություն  Արդյունքների ամփոփում  Ծառայությունների փաթեթների մշակում					Կարապետյան Ա.  Սահակյան Խ.  Պետրոսյան Գ.
3	ՎԷԱ և ԷԱ, գյուղատնտեսական և բնապահպանական տեխնոլոգիաների սարքավորումների նախագծում, արտադրություն, տեղադրում և մոնտաժ:	ՎԷԱ և ԷԱ ոլորտում ծառայությունների մատուցման համար նյութատեխնիկական բազայի ստեղծում և համալրում	Անհրաժեշտ նյութերի և սարքավորումների բացակայություն տեղական շուկայում,	Ծրագիր	Արտադրական սարքավորումների ցանկի կազմում  Համաձայնեցում  Գնումների					Սահակյան Խ.  Կարապետյան Ա.

					իրականացում					
4	ՎԷԱ և ԷԱ, գյուղատնտեսական և բնապահպանական տեխնոլոգիաների սարքավորումների նախագծում, արտադրություն, տեղադրում և մոնտաժ:	ՎԷԱ և ԷԱ ոլորտում ծառայությունների ներկայացում շուկայում և շահառուների սպասարկում	Բավարար պահանջարկի բացակայություն,  Ցածր գնողունակություն	Ծրագիր  Պատվերների կատարումից ստացված եկամուտներ	Գովազդային արշավների կազմակերպում  Ծառայությունների մատուցում					Սահակյան Խ.  Պետրոսյան Գ.
5	Կանաչ տեխնոլոգիաների ոլորտում կադրերի պատրաստում և վերապատրաստում	Կադրերի պատրաստում և վերապատրաստում  ԿՏԿ Հիմնադրամը արհեստավարժ կադրերով համալրում	Ոչ արդիական մոդուլների մշակում  Դասընթացների մասնակիցների հետաքրքրության պակաս  ԿՏՀԿ գործունեության մեջ պոտենցյալ մարդկային ռեսուրսների բացակայություն	Ծրագիր	Դասընթացների մոդուլների պատրաստում հիմնված շուկայի ուսումնասիրության արդյունքների և ծրագրով նախատեսված ուղղությունների վրա  2 հատ դասընթացների կազմակերպում  Դասընթացների					Կարապետյան Ա.  Սահակյան Խ.



					մասնակիցներից ԿՏԿ Հիմնադրամի կադրային բազայի (ցանցի) ձևավորում					
6	Կանաչ տեխնոլոգիաների ուլորտի և ԿՏԿ Հիմնադրամի գործունեության մասին իրազեկում	ԿՏԿ հիմնադրամը որպես ոլորտի ճանաչված կազմակերպություն շուկայում	Ինտերնետային կայքի ոչ լիարժեք աշխատանք  Բրոշյուրների և բուկլետների ոչ պրոֆեսիոնալ դիզայն ու բովանդակություն  Հետաքրքրության պակաս հնարավոր շահառուների շրջանում	Ծրագիր  Այլ աղբյուրներ	ԿՏԿ հիմնադրամի ինտերնետային կայքի գործարկում  Բրոշյուրների և բուկլետների կազմում, հրատարակում  Տեղեկատվական նյութերի տարածում, պոտենցյալ շահառուների հետ հանդիպումներ				Պետրոսյան Գ.  Կարապետյան Ա.  Սահակյան Խ.  Ներգրավված փորձագետներ	
7	Կանաչ տեխնոլոգիաների ուլորտում հետազոտական	Գործընկերային հարաբերություններ հաստատել գիտահետազոտակ	Պոտենցիալ գործընկերների ոչ պրոֆեսիոնալ ու պատասխանատու	Ծրագիր	Պոտենցյալ գործընկեր գիտահետազոտական ու կրթական				Կարապետյան Ա.	

	աշխատանքներ, կոնֆերանսների, սեմինարների, քննարկումների կազմակերպում	ան ու կրթական հաստատություններ ի հետ, համատեղ ծրագրերի իրականացում և ոլորտի հնարավորությունների ներկայացում	մոտեցում  Միջոցառումների ձևական բնույթ	Սեփական միջոցներ	հաստատությունների ցանկի կազմում  Հուշագրերի ստորագրում առավել ակտիվ ու առաջադեմ կազմակերպությունների հետ  Առնվազն 2 կոնֆերանսների և սեմինարների կազմակերպում					Սահակյան Խ.  Պետրոսյան Գ.  Գործընկեր կազմակերպություններ
8	Համագործակցություն միջազգային դոնոր կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ:	Միջազգային դոնոր կազմակերպության ֆինանսավորմամբ նոր ծրագրի սկիզբ	Հնարավոր պարտություն միջազգային տենդերներում	Սեփական միջոցներ	Առաջարկների մշակում  Մասնակցություն մրցույթներին  Ծրագրերի իրականացում					Կարապետյան Ա.  Սահակյան Խ.  Պետրոսյան Գ.  Ներգրավված

										փորձագետներ
										Գործըկեր կազմակերպություններ
9	ԿՏԿ Հիմնադրամի արդյունավետ գործունեության ապահովում	2016 թ. ընթացքում իրականացված միջոցառումների մոնիտորինգ և արդյունքների գնահատում	Ոչ անաչառ ու անկախ մոնիտորինգի և գնահատման իրականացում  Սուբյեկտիվ գործոնի առկայություն	Ծրագիր  Մեփական միջոցներ	Մոնիտորինգի իրականացման պատասխանատու/ների ընտրություն  Մոնիտորինգի իրականացման մեխանիզմների քննարկում և հաստատում					Կարապետյան Ա.  Սահակյան Խ.  Պետրոսյան Գ.  Ներգրավված փորձագետներ

Մոնիտորինգի աղյուսակ

	Արդյունք	Մտուգման ցուցանիշ	Տվյալների աղբյուրը	Արդյունքների հավաքման մեթոդը	Գնահատում	Պատասխանատու
1	ԿՏԿ հիմնադրամն ունի պետական գրանցում, հաստատված է կազմակերպչական կառուցվածքը, ԿՏԿ-ն ծավալում է բնականոն գործունեություն	Պետ. ռեգիստրի գրանցում, Հաստատված կառուցվածք	ԿՏԿ փաստաթղթեր	Փաստաթղթերի ուսումնասիրություն		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ. Ներգրավված իրավաբան փորձագետ
2	Շիրակի մարզում շուկայի ուսումնասիրություն, շահառուներին առաջարկվող փաթեթներ	Շուկայի ուսումնասիրության արդյունքներ Ծառայությունների մշակված փաթեթներ	ԿՏԿ փաստաթղթեր	Փաստաթղթերի ուսումնասիրություն		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ. Ներգրավված փորձագիտական խումբ
	Արդյունք	Մտուգման ցուցանիշ	Տվյալների աղբյուրը	Արդյունքների հավաքման մեթոդը	Գնահատում	Պատասխանատու
3	Առկա է ՎԷԱ և ԷԱ ոլորտում ծառայությունների մատուցման համար նյութատեխնիկական բազան՝ հիմնված ծառայությունների փաթեթների վրա	ԿՏԿ-ն համալրել է իր նյութատեխնիկական բազան առաջարկվող ծառայությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ գործիքներով ու	Գնումների փաստաթղթեր, Նյութեր, տեխնիկական միջոցներ	Գնումների փաստաթղթերի ուսումնասիրություն, Դիտարկումներ, Հարցումներ		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ. Հնարավոր է՝ ներգրավված փորձագետ

		նյութերով				
4	Պոտենցիալ շահառուները տեղեկացված են ՎԷԱ և ԷԱ ոլորտում ԿՏԿ հիմնադրամի ծառայություններին և օգտվում են այդ ծառայություններից	Շիրակի մարզում ՎԷԱ և ԷԱ ծառայություններից օգտվող շահառուների առնվազն 50 տոկոսը դիմել են ԿՏԿ: Առկա պատվերները ապահովել են ԿՏԿ ինքնաֆինանսավորման նախանշված ցուցանիշները	Պատվերների, դիմումների և հարցումների գրանցամատյան,	Պատվերների, դիմումների և հարցումների գրանցամատյանների ուսումնասիրություն, հարցումներ,		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ. Հնարավոր է՝ ներգրավված փորձագետ
5	Իրականացվել է առնվազն 20 մասնագետների պատրաստում և վերապատրաստում, ԿՏԿ Հիմնադրամը համալրվել է նոր արհեստավարժ կադրերով	Վերապատրաստված մասնագետների ցանկում գրանցված առնվազն 20 մասնակից սերտիֆիկացվել է և նրանց կողմից լրացված հարցաթերթերում ԿՏԿ ուսուցողական ծրագրին տրվել է դրական գնահատական, ԿՏԿ աշխատակիցների ցանկում ներգրավված են ուսուցում անցած մասնակիցներ, որոնք իրենց ստացած գիտելիքներն օգտագործում են ԿՏԿ	ԿՏԿ ուսուցողական նյութեր, մասնակիցների լրացված հարցաթերթեր, ԿՏԿ աշխատակիցների ցանկ	Փաստաթղթերի ուսումնասիրություն, Հարցումներ		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ.

		ծրագրերի իրականացման ընթացքում				
	<b>Արդյունք</b>	<b>Ստուգման ցուցանիշ</b>	<b>Տվյալների աղբյուր</b>	<b>Արդյունքների հավաքման մեթոդը</b>	<b>Գնահատում</b>	<b>Պատասխանատու</b>
6	Շուկայում ԿՏԿ հիմնադրամը ճանաչված է որպես ոլորտի ակտիվ կազմակերպություն	Շիրակի մարզում ԷԱ և ՎԷԱ տեխնոլոգիաներից օգտվող շահառուների առնվազն 80 տոկոսը տեղեկացված է ԿՏԿ կողմից մատուցվող ծառայություններին	Հարցաթերթեր Պատվերների, դիմումների և հարցումների գրանցամատյան	Հարցումներ, Պատվերների, դիմումների և հարցումների գրանցամատյանների ուսումնասիրում		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ.
7	Առնվազն 3 գիտահետազոտական և կրթական հաստատությունների հետ ստորագրված է համագործակցության հուշագրեր, իրականացվել է առնվազն 2 համատեղ ծրագիր կամ միջոցառում, կազմակերպվել է առնվազն 2 կոնֆերանս:	3 գիտահետազոտական և կրթական հաստատություն իրականացնում են ԿՏԿ հետ 2 համատեղ ծրագրեր, կազմակերպվել են առնվազն 2 կոնֆերանս կամ աշխատանքային քննարկումներ	Կնքված պայմանագրեր կամ հուշագրեր, Ծրագրերային փաստաթղթեր, Կոնֆերանսների և աշխ. հանդիպումների նյութեր, մասնակիցների ցանկ	Փաստաթղթերի ուսումնասիրություն, Հարցումներ, Արդյունքների գնահատում		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ.
8	ԿՏԿ հիմնադրամը սկսել է իրականացնել նոր ծրագիր միջազգային դոնոր	Առկա է միջազգային դոնոր կազմակերպության հետ իրականացվող	Ծրագրի իրականացման պայմանագիր, Ծրագրի	Փաստաթղթերի ուսումնասիրություն, Հարցումներ, Դիտարկումներ		Կարապետյան Ա. Սահակյան Խ. Պետրոսյան Գ.

	կազմակերպության ֆինանսավորմամբ	ծրագրի ստորագրված պայմանգիր, Գործում է ծրագրի իրականացման գրասենյակ իր աշխատակազմով,	իրականացման ընթացակարգերի փաստաթուղթ, Հարցում գործընկեր կազմակերպությանը			
--	-----------------------------------	---	--	--	--	--